



ԱՐԱՔՍՅԱ ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի ասպիրանտ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ

ՋԱՐԳԱՑՄԱՆ՝ ՈՐՊԵՍ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից տնտեսությունը դինամիկ զարգացող համակարգ է: Տնտեսական պատմությունը վկայում է այն մասին, որ չկան կայուն տնտեսական զարգացման համընդհանուր բանաձևեր: Կայուն զարգացումը ենթադրում է այնպիսի որակական փոփոխություններ, որոնք առաջին հերթին պետք է արտացոլվեն ինստիտուցիոնալ բարեփոխումների համատեքստում: Տնտեսության կայուն զարգացումը, որպես վիճակագրական ուսումնասիրության օբյեկտ, պահանջում է առանցքային փոփոխականների, երևույթների ու կապերի քանակական բնութագրիչների ուսումնասիրություն և դրա հիման վրա որակական բնութագրերի բացահայտում ու վերաիմաստավորում: Այդ խնդիրների ուսումնասիրությանն էլ նվիրված է սույն հոդվածը:

Հիմնաբառեր. տնտեսության կայուն զարգացում, տնտեսական աճ, մակրոտնտեսական հավասարակշռություն, վիճակագրական ուսումնասիրություն, գիտատեխնիկական առաջընթաց

JEL: C40, C43, C46, C49, O11, O29

Տնտեսության կայուն զարգացումը ցանկացած տնտեսական համակարգի առանցքային նպատակներից է: Սակայն տնտեսության կայուն զարգացման հիմնական բնութագրիչների քանակական ու որակական կողմերի վիճակագրական ուսումնասիրության հիմնահարցերը շարունակում են մնալ արդիական՝ նոր խնդիրներ առաջադրելով գիտությանը: Տարբեր ժամանակներում տնտեսության զարգացման տեմպերի գնահատման համար առաջ են

քաշվել տարբեր մոտեցումներ ու ցուցանիշներ: Այդ ցուցանիշների շարքում առանցքային է ազգային ցուցանիշների համակարգի դերը:

Ազգային հաշիվների համակարգի ձևավորման ու զարգացման հարցում մեծ դերակատարում են ունեցել 1929–33 թթ. մեծ տնտեսական ճգնաժամը և, դրա հաղթահարման օբյեկտիվ անհրաժեշտությամբ ձևավորված, տնտեսության պետական կարգավորման քեյնսյան տեսությունը: Պետք է նշել սակայն, որ դեռևս 1920–30-ական թթ. Կ. Կլարկն ու Ս. Կուզնեցն առաջարկեցին մշակել և ներդնել որոշակի ինդեքսներ, որոնք պետք է բնութագրեն տնտեսության զարգացման մակարդակն ու հնարավորություն տան իրականացնելու համեմատական վերլուծություններ: Այդ նպատակով Կ. Կլարկն առաջ քաշեց ՀԱԱ գաղափարը, իսկ Ս. Կուզնեցը՝ ՀՆԱ: 1934 թ. Ս. Կուզնեցը հատուկ ԱՄՆ-ի կառավարության համար մշակեց ՀՆԱ ցուցանիշը¹, որի նպատակն էր բոլոր տնտեսավարող սուբյեկտների կողմից ստեղծված արդյունքների միասնական գնահատումն ու ներկայացումը մեկ ընդհանրական ցուցանիշի միջոցով: Ս. Կուզնեցը նշում էր, որ իր կողմից մշակված ցուցանիշը չի կարող կենսամակարդակի կամ տնտեսության զարգացման մակարդակի գնահատման ամփոփ ցուցանիշ համարվել, քանի որ դրանք առավել ընդգրկուն բովանդակություն ունեն: Հիմնական խնդիրը նա համարում էր այն, որ ՀՆԱ ցուցանիշը չի արտացոլում եկամուտների բաշխումը, ինչը բնակչության բարեկեցության մակարդակի վրա ազդող առանցքային գործոններից է²:

Իր հետագա հետազոտություններում Ս. Կուզնեցը բազմիցս անդրադարձել է ՀՆԱ ցուցանիշի թերություններին³: Մասնավորապես, այդ քննադատություններն ուղղված էին այն խնդրին, որ բարեկեցության կամ տնտեսական զարգացման մակարդակի գնահատման համար անհրաժեշտ է հստակ սահմանազատել տնտեսական աճի քանակական ու որակական կողմերը և տարբերակել կարճաժամկետ ու երկարաժամկետ լազերը:

Այդուհանդերձ, 1944 թ. Բրետտոնվուդյան համաժողովի որոշմամբ ՀՆԱ ցուցանիշը ստացավ տնտեսական աճի գնահատման միջազգային ստանդարտի կարգավիճակ⁴:

Սակայն պետք է նկատել, որ տնտեսական աճը տնտեսության կայուն զարգացման հիմնական, բայց ոչ միակ բաղադրիչն է: Անկասկած, տնտեսական զարգացումը, որպես համընդհանուր նպատակ և տնտեսագիտական հասկացություն, ավելի ընդգրկուն և բազմաշերտ է: Ընդհանրական մոտեցմամբ այն հաճախ մեկնաբանվում է նաև որպես ինստիտուցիոնալ շրջանակների փոփոխման և աճի օպտիմալ ուղղության որոնման գործընթաց, որը կարող է տեղի ունենալ նաև կառուցվածքային առաջադիմական տեղաշարժերի, սոցիալական բարեփոխումների, ինստիտուցիոնալ արդիականացման և համանման այլ ձևերով: Տնտեսության զարգացման մակարդակը և դինամիկան որոշելու համար անհրաժեշտ է կիրառել որոշակի չափանիշներ, որոնց միջոցով բնութագրվում են զարգացման գործընթացի վրա ազդող գործոնները: Ըստ էության, նշվածը ենթադրում է տնտեսության կայուն զարգացման

¹ Տե՛ս **Coyle D.**, GDP: A Brief but Affectionate History. UK: Princeton University Press. Chapter 1. 2012, էջ 12–13:
² Տե՛ս **Kuznets S.**, National Income, 1929, 1932. 1934. 73rd US Congress, 2d session, Senate document no. 124, էջ 5–7:
³ Տե՛ս **Dickinson E.**, GDP: a brief history // Foreign Policy. 2011. 2nd, January. էջ 1–4:
⁴ Տե՛ս **Costanza R.**, Hart M. Beyond GDP: The Need for New Measure of Progress. USA: Boston University Creative Services. 2009, էջ 5–7:

վիճակագրական ուսումնասիրություն՝ ուղղված տնտեսության հիմնական քանակական համամասնությունների վերլուծությանն ու օպտիմալ հարաբերակցությունների կանխատեսմանը: Այս նպատակն ինքնին բարդ է, քանի որ, ինչպես նշում է Գ. Մյուրդալը, տնտեսական զարգացումը ողջ սոցիալական համակարգի առաջընթացն է, որն ուղեկցվում է հասարակության հիմնական պահանջմունքների բավարարման մակարդակի բարձրացմամբ⁵:

Համանման տրամաբանությամբ է առաջնորդվում նաև Մայքլ Թոդարոն: Ըստ նրա՝ զարգացումը բոլոր կենսապայմանների բարելավման գործընթացն է⁶: Մ. Թոդարոն զարգացման հավասարապես կարևոր տեսանկյուններ է համարում կենսամակարդակի բարձրացումը, ինքնահարգանքի աճին նպաստող պայմանների ձևավորումը սոցիալական, քաղաքական և տնտեսական այնպիսի համակարգերի ու ինստիտուտների հաստատմամբ, որտեղ կարևորվում են արժանապատվությունը և հարգանքը, ինչպես նաև ազատությունը: Այսպիսով՝ տնտեսության կայուն զարգացումը դինամիկ առաջընթացն է, որի շնորհիվ տեղի է ունենում կենսապահովման կարողությունների մեծացում, ինչպես նաև ստեղծվում են մարդկային ներուժի առավել լիարժեք իրացման նպաստավոր պայմաններ:

Պետք է նկատել, որ «զարգացում» և «առաջընթաց» հասկացությունները լիովին չեն նույնանում: Ջարգացումը կարող է ուղեկցվել նաև բացասական երևույթներով: Ինչպես նշում է Յանոշ Կորնային, առաջընթացը միշտ ընկալվում է դրական իմաստով: Նա, ընդունելով, որ տեխնիկական առաջընթացի նվաճումները կարող են նաև չարաչափվել, եզրակացնում է, թե տեխնիկական փոփոխությունների ուղղվածությունը հաճախ անվանում են առաջընթաց, քանի որ դրանում անհամեմատ ավելի շատ են առավելությունները, քան թերությունները⁷: Կարևոր է ոչ միայն զարգացման արդյունքների ու բացասական հետևանքների ցանկալի հաշվեկշռվածության ապահովումը, այլև կողմնակի թերությունների հնարավորինս նվազեցումը և կանխարգելումը:

Մինչև 20-րդ դարի 70-ական թվականները տնտեսության զարգացումը գրեթե միշտ դիտվում էր որպես զուտ տնտեսական երևույթ, որում ՀՆԱ աճը գերնպատակ էր, և անտեսվում էին գործազրկության, աղքատության, եկամուտների բաշխմանն առնչվող հիմնախնդիրները: Ի վերջո, զարգացման վերաբերյալ այս հիմնական մոտեցումները լրացվել են նաև արտատնտեսական սոցիալական գործոնների որոշակի վկայակոչմամբ: Այժմ կարևորվում են նաև հանրակրթության, առողջապահական պայմանների և ծառայությունների, բնակարանային ապահովման հետ կապված խնդիրները:

Արդեն 80-ական թվականներին ձևավորվեցին տնտեսական զարգացման ինստիտուցիոնալ, ձախկարդիմալիստական տեսությունները, համաձայն որոնց, տնտեսական զարգացումը ենթադրում էր գնաճի չափավոր տեմպեր, զբաղվածության բարձր մակարդակի ապահովում, եկամուտների և սեփականության արդարացի բաշխում, սոցիալական ծառայությունների հիմնական տեսակների ապահովում բնակչության բոլոր շերտերի համար, համախմբած բյուջեի հավասարակշռության հաստատում, փողի առաջարկի նկատմամբ վերահսկողության սահմանում:

⁵ Տե՛ս **Myrdal G.**, *Asian Drama: An Inquiry into the Poverty of Nations*. N.Y., 1968. էջ 18:

⁶ Տե՛ս **Todaro M.**, *Economic Development*. Addison-Wesley Publishing Company, 1996, 6th ed., էջ 685:

⁷ Տե՛ս **Корнаи Я.**, *Инновации и динамизм: взаимосвязь систем и технического прогресса*. „Вопросы экономики“, 2012, N4, էջ 18:

80-ականների կեսերին ձևավորված մեկ այլ՝ էվոլյուցիոն տնտեսագիտության ներկայացուցիչ Ս. Գլազևը նշում է, որ տնտեսական զարգացման ուղիները որոշվում են ոչ թե տնտեսական հավասարակշռության հասնելու հավիտենական խնդրի լուծմամբ, այլ համապատասխան տնտեսական միջավայրում գործող տնտեսավարող սուբյեկտների վարքագծի էվոլյուցիայով: Տնտեսավարող սուբյեկտների վարքագծային շարժառիթները ձևավորվում են որոնումների և «բնական ընտրության» գործընթացներում տնտեսական միջավայրի հետ փոխհամաձայնության միջոցով⁸:

Բ. Կուզնեցովը տնտեսական զարգացումը ներկայացնում է որպես սիներգետիկ գործընթաց և դիտարկում գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիայի զարգացման տեսանկյունից⁹:

Ռ. Նուրեևը, ուսումնասիրելով քեյնսյան, նորդասական և ինստիտուցիոնալ մոտեցումները, առանձնացնում է տնտեսական զարգացմանը նպաստող գործոնների օրգանական փոխկապվածությունը: Ժամանակակից աշխարհում հնարավոր չէ վերացարկվել արտաքին գործոններից, որոնք մեծ դեր են խաղում այս փոխկապակցած աշխարհում¹⁰:

Համաաշխարհային բանկի՝ ավելի քան երկու տասնամյակ առաջ արտահայտած պաշտոնական դիրքորոշման մեջ նշվում է, որ զարգացման գերնպատակը կյանքի որակի բարելավումն է: Հատկապես աշխարհի աղքատ երկրներում կյանքի որակի բարելավումը ենթադրում է շարունակական տնտեսական աճ, սակայն ներառում է անհամեմատ ավելին: Որպես ինքնին նպատակներ են ընդգրկվում որակյալ կրթությունը, առողջության և սննդառության ավելի բարձր չափորոշիչներ, աղքատության կրճատումը, չաղտոտված բնամիջավայրը, հնարավորությունների հավասարությունը, անհատական ազատությունը և հարուստ մշակութային կյանքի առկայությունը¹¹:

Տնտեսության կայուն զարգացման էության առավել լիարժեք բացահայտման համատեքստում առանձնակի կարևորություն է ստանում զարգացման տնտեսագիտության առանցքային դրույթների քննական վերլուծությունը: Մասնագիտական գրականության մեջ արտահայտվում է այն տեսակետը, որ տնտեսության կայուն զարգացման տեսության առաջին համակարգված ուսումնասիրության փորձերն ամփոփված են Կ. Մարքսի «Կապիտալ» աշխատությունում, որտեղ առաջնային էր հասարակության զարգացման տնտեսական օրենքների բացահայտումը¹²: Սակայն մարքսյան տեսության այդ նպատակը, լայն առումով, մնաց անկատար, քանի որ «Կապիտալում» առավել սուր էին դրված հասարակարգային պայքարի արտացոլման ու, այդ համատեքստում, կապիտալիզմի բացասական կողմերի վերհանման խնդիրները: Կ. Մարքսն իր վերլուծություններում վերացարկվում էր այնպիսի երևույթներից, ինչպիսիք էին ԳՏԱ-ն, արտաքին առևտուրը, ձգնաժամերը¹³,

⁸ Տե՛ս **Глазьев С.**, Теория долгосрочного технико-экономического развития. М., «Влад-Дар», 1993, էջ 9:

⁹ Տե՛ս **Кузнецов Б.**, Введение в экономическую синергетику. Набережные Челны, Изд-во Кам ПИ, 1999, էջ 74–78:

¹⁰ Տե՛ս **Нуреев Р.**, Теория развития: дискуссия о внешних факторах становления рыночной экономики // «Вопросы экономики», 2000, №7, էջ 141–143. 89.06 условия экономического развития (обзор) // «Экономист», 2004, №7:

¹¹ Տե՛ս World Bank, World Development Report, 1991 (New York: Oxford University Press, 1991), էջ 4:

¹² Տե՛ս **Ерохина Е.**, Прибыль в условиях монополистической конкуренции. Томск, 1994, էջ 102–103:

¹³ Կ. Մարքսը ձգնաժամերը բնորոշ էր համարում կապիտալիզմին, սակայն բացառում էր դրանց առաջացման հնարավորությունը սոցիալիզմի պայմաններում:

հարկային քաղաքականության փոփոխությունները, ոչ մրցակցային շուկայական կառուցվածքների գոյությունը և այլն: Այս վերացարկումների հիման վրա կատարված հետազոտությունները չէին կարող լիարժեք արտացոլել տնտեսության կայուն զարգացման առանցքային կողմերը:

Տնտեսության զարգացման տեսությանն առնչվող ուշագրավ հետազոտությունների կարելի է հանդիպել նաև Յ. Շումպետերի աշխատություններում: Նրա՝ զարգացման տեսության հիմնական դրույթներն ամփոփվում են «հասարակական արդյունքի շրջապտույտի» հայեցակարգում¹⁴, որն, ըստ էության, փակ տնտեսության հավասարակշռության հետազոտությունն է: Նախ Շումպետերի, այնուհետև Կոնդրատևի կողմից զարգացման նպատակները ներկայացված են ավելի քան որոշակի: Տնտեսական համակարգում հայտնվում են արտաքին գործոններ, որոնք ազդում են դրա զարգացման վրա: Այս դեպքում տնտեսավարողը տնտեսական համակարգի ներքին տարրն է, իսկ արտաքին բաղադրիչները մնում են անհայտ: Տնտեսական զարգացումը նույնացվում է նորարարություն կատարող տնտեսավարող սուբյեկտների ակտիվության հետ: Այս մոտեցման համաձայն՝ մրցակցությունն այն գործոնն է, որի շնորհիվ հին համակցությունները վերափոխվում են նորի¹⁵:

Համաձայն Շումպետերի տեսակետի՝ զարգացումը նորարարությունների՝ նոր ապրանքների, ծառայությունների, արտադրության մեթոդների, առևտրային նոր շուկաների, հումքի նոր աղբյուրների, մոնոպոլ դիրքի հաստատման, վերակազմակերպման գործընթացների ամբողջությունն է: Այս տեսության գլխավոր գաղափարն այն է, որ ռեսուրսները պահպանողական տնտեսավարողից անցնում են նորարար ձեռնարկատիրոջը, ով դրանք տնօրինում է ավելի արդյունավետ: Վերջին հաշվով, սա հանգեցնում է ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը՝ դառնալով տնտեսության զարգացման հիմքը:

Սակայն հարկ է նշել, որ նորարար ձեռնարկատերը տնտեսական համակարգի սուբյեկտներից միայն մեկն է, և պայմանավորել ողջ զարգացման գործընթացը միայն նրա գործունեությամբ, այնքան էլ խելամիտ չէ: Բացի այդ, տնտեսական զարգացումը ներկայացնել իբրև որակական և քանակական բաղկացուցիչների մեխանիկական ամբողջություն, այնքան էլ իրատեսական չէ: Տնտեսական զարգացումը ենթադրում է որակական փոփոխություններ, որոնց ոչ միշտ է հնարավոր տալ քանակական գնահատականներ: Տնտեսական զարգացման քանակական կողմն արտահայտում են կուտակված նյութական պաշարները և մշակութային արժեքները: Սակայն, սոցիալական առումով, հետաքրքրություն է ներկայացնում ոչ թե այն, ինչ կուտակված է, այլ թե ինչպես է այդ ամենն օգտագործում հասարակությունը, որն էլ տնտեսության զարգացումը վերածում է տնտեսության կայուն զարգացման:

Այսպիսով՝ հասարակական կյանքն ունի որոշակի էվոլյուցիոն ուղղվածություն: Ջարգացումն այդ էվոլյուցիան ուղղորդելու, կազմակերպելու, այսինքն՝ գիտակցված ու կամային միջամտություն կատարելու գործընթաց է: Տնտեսական զարգացումն առողջ առաջընթաց է, եթե այս կամ այն չափով վերաբերում է հանրության յուրաքանչյուր անդամի:

Սակայն այս տեսությանը նույնպես բնորոշ են որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես՝ Յ. Շումպետերն անտեսում էր շահույթի և տոկոսի

¹⁴ Տե՛ս Шумпетер Й., Теория экономического развития: пер. с нем., М., 1982, էջ 58–66:

¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 159–160:

գոյությունը, ենթադրում էր, որ արտադրողները միայն ծախսերն են փոխհատուցում, տնտեսական կապերը կայուն են, առաջարկն ու պահանջարկը մշտապես հավասար են, իսկ թողարկման ծավալը որոշվում է՝ ելնելով նախորդ ժամանակաշրջանի իրացման ծավալներից¹⁶:

Անկասկած, այս վերացարկումների համատեքստում կատարված ընդհանրացումները հեռու էին իրական տնտեսական իրավիճակից, սակայն, տնտեսության զարգացումը հետագայում նույնացվեց տնտեսական աճի հետ, և հետագոտությունների կենտրոնը դարձավ ոչ թե տնտեսության կայուն զարգացումը, այլ տնտեսական աճը: Այս պայմաններում աղավաղվեց նաև «տնտեսական զարգացում» հասկացության ընկալումը. դա դիտարկվում էր որպես առաջընթաց¹⁷ կամ տնտեսական համակարգի էվոլյուցիա¹⁸:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո մի շարք արևմտյան հետազոտողներ տնտեսական զարգացումը դիտարկեցին որպես եկամտի աճով պայմանավորված կառուցվածքային փոփոխություններ¹⁹: Թեև այսպիսի մոտեցումը բավական առաջադիմական էր, այդուհանդերձ, այն նույնպես չէր արտացոլում տնտեսական զարգացման առանցքային կողմերը: Առաջին հերթին պետք է նշել, որ եկամուտների աճը տնտեսության զարգացման հիմնական, սակայն ոչ միակ գործոնն է, մյուս կողմից՝ տնտեսության զարգացումը բնութագրվում է ոչ միայն կառուցվածքային փոփոխություններով, այլև տնտեսական հարաբերությունների բնույթի փոփոխությամբ, որոնք նշանակալի ազդեցություն են ունենում տնտեսական համակարգի հետագա վարքագծի վրա՝ փոփոխելով առանձին բաղադրիչների միջև օպտիմալ համամասնությունները, կապերն ու փոխհարաբերությունները:

Հարկ է նշել նաև, որ կառուցվածքային փոփոխությունները կարող են հանդես գալ ոչ միայն որպես տնտեսության զարգացման գործոն, այլև իբրև հետևանք, հետևաբար՝ այնքան էլ ճիշտ չէ տնտեսության զարգացումը միայն այդ վերափոխումների գոյությամբ պայմանավորելը:

Տնտեսության զարգացման տեսության առանցքային կողմերի հետազոտության համատեքստում մեծ է հատկապես ինստիտուցիոնալիզմի ներդրումը: Տնտեսության զարգացման ինստիտուցիոնալ տեսության առանցքը ավանդական տեսությունների քննադատությունն էր: Ինստիտուցիոնալիստները քննադատում էին ավանդական տնտեսագիտական ուղղություններն այն բանի համար, որ զարգացման մոդելները, որոնք նույնանում են տնտեսական աճի հետ, սխեմատիկ են և իրականությունից կտրված. հետազոտությունները սահմանափակվել են միայն նեղ, ինքնակարգավորվող շուկայական տնտեսության հարցադրումներով կամ պետական կարգավորման մոտեցումներով՝ անտեսելով սոցիալական և քաղաքական խնդիրները:

Եթե ավանդական տնտեսագիտական ուղղություններն ավելի շատ էին վերացարկվում իրականությունից, ու գերիշխող էր այլ հավասար պայմանների սկզբունքը, ապա ինստիտուցիոնալիզմն ավելի իրատեսական մոտե-

¹⁶ Տե՛ս **Ерохина Е.**, նշվ. աշխ., էջ 102–103:

¹⁷ Տե՛ս **Селигмен Б.**, Основные течения современной экономической мысли. М., “Прогресс” էջ 302: **Кронрод Я.**, Очерки социально-экономического развития XX века. М., 1992. էջ 107: **Тойнби А.**, Постигание истории. М., “Прогресс”, 1991, էջ 250: **Мизес Л.**, Бюрократия. Запланированный хаос. Антикапиталистическая ментальность. М., “Дело”, 1993, էջ 189–190:

¹⁸ Տե՛ս **Мизес Л.**, նշվ. աշխ., էջ 135: **Хомяков П.**, Национал - прогрессизм. М., “Паллада”, 1994 էջ 4: **Маршалл А.**, Принципы экономической науки: в 3 т.: пер. с англ, М., 1993. т. 1, էջ 51:

¹⁹ Տե՛ս **Simmons S.** Economic Development and Economic History //Development Studies and Colonial Policy /Ed., By B. Sygham, S. Simmons. L., 1987:

ցումներ էր ենթադրում. առաջին՝ յուրաքանչյուր երկիր ունի միայն իրեն բնորոշ ինստիտուցիոնալ համակարգ կամ ինստիտուցիոնալ մատրից²⁰: Դա ձևական և ոչ ձևական սահմանափակումների սերտաձուլման է, որոնք կանխորոշում են յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման ընթացքը: Դրանով է պայմանավորված այն կարևոր հանգամանքը, որ տարբեր ինստիտուցիոնալ համակարգեր ունեցող երկրներում ընդհանուր «խաղի կանոնների» փոխառումը կարող է հանգեցնել բացասական էական հետևանքների:

Պետք է նշել, որ ինստիտուցիոնալիզմի բոլոր ուղղություններն ունեն մեկ ընդհանուր թերություն. առանցքային հիմնադրույթներում գերակշռում է երևույթների վերլուծության նկարագրական մոտեցումը: Ինստիտուցիոնալիզմի տարբեր հոսանքներն ինստիտուտները դիտարկում են մեծ մասամբ դրանց բնույթի տեսանկյունից՝ դա տրված համարելով պատմական որոշակի ժամանակաշրջանում: Որպես կանոն, ընդունվում է, որ նկարագրվող ինստիտուտի ձևավորումը և գործունեությունը ինքնըստինքյան հանգեցնում են որոշակի տնտեսական, սոցիալական և այլ արդյունքների, որոնք էլ հենց նախանշում են տնտեսության զարգացման բնույթը:

Ինստիտուտների տեղի ու դերի նման բացատրությունը հանգեցնում է այն համոզման, որ ինստիտուցիոնալիզմը պետք է վերածվի հասարակության զարգացման հեռանկարների և ուղիների մասին գիտության: Ինստիտուցիոնալ համակարգը ենթադրում է յուրաքանչյուր երկրի, ինչպես նաև դրա յուրաքանչյուր շրջանի ինստիտուցիոնալ մատրից: Այդ մոտեցումը պահանջում է ֆորմալ և ոչ ֆորմալ կանոնների միաձուլում՝ ապահովելով յուրաքանչյուր երկրի տնտեսության՝ սեփական ուղով զարգացումը:

Ըստ տնտեսության կայուն զարգացման ժամանակակից մարտահրավերների՝ կարևորվում են համաշխարհային ինստիտուտների դերն ու նշանակությունը: Համաշխարհային տնտեսության կայուն զարգացման գործընթացում ինստիտուտների դերի ընդգծման նպատակով առաջ է քաշվում «ինստիտուցիոնալացում» հասկացությունը²¹: Վերջինս այնպիսի գործընթաց է, որի ազդեցությամբ մասնավոր պահանջմունքները վերածվում են հասարակականի, որոնց բավարարման համար ձևավորվում են համապատասխան կարգավորող ինստիտուտներ:

Այսպիսով՝ տնտեսության կայուն զարգացումը բազմաշերտ գործընթաց է, որում առկա հիմնախնդիրներն ու այդ զարգացումն ապահովող գործոններն օրգանապես միահյուսված են և փոխապայմանավորված: Ինչպես արդեն նշել ենք, նախնական պատկերացումներում դա նույնացվել է տնտեսական աճի հետ: Զարգացման գնահատման այլընտրանքային ցուցանիշ է համարվել մեկ շնչի հաշվով համախառն արդյունքի ծավալը, որը կոչված է արտացոլելու երկրի կարողությունը՝ ընդլայնելու թողարկման ծավալն ավելի բարձր տեմպերով, քան բնակչության աճի տեմպն է: Նշված ցուցանիշի իրական մեծության մակարդակը և աճի տեմպերը, բնականաբար, օգտագործվել են բնակչության բարեկեցությունը գնահատելու համար:

Տնտեսական զարգացումը քննարկվել է նաև արտադրության ու զբաղվածության կառուցվածքի պլանավորված փոփոխության տեսանկյունից՝ իբրև գյուղատնտեսության մասնաբաժնի նվազում և վերամշակող ձյուղերի

²⁰ Տե՛ս Кидрина С., Институциональные матрицы и развитие России, М., «ТЕИС», 2000, էջ 23:

²¹ Տե՛ս Дорина Е., Проблемы институционализации в контексте глобальной интеграции и трансформации мировой экономики // «Вестник экономической интеграции». 2009, էջ 11–12:

ու ծառայությունների ոլորտի բաժնի մեծացում: Հետևաբար՝ զարգացմանն ուղղված ռազմավարություններում շեշտադրվել է արդյունաբերության զարգացումը:

Այսպիսով՝ տնտեսության կայուն զարգացումը ենթադրում է այնպիսի որակական փոփոխություններ, որոնք, առաջին հերթին, պետք է դրսևորվեն ինստիտուցիոնալ բարեփոխումների համատեքստում: Սա հիմք է տալիս պնդելու, որ պետությունը տնտեսության կայուն զարգացման ակտիվ մասնակիցն ու անփոխարինելի սուբյեկտն է: Եթե պետությունը չի ստանձնում այդ հիմնարար գործառույթը կամ դա կատարում է ոչ պատշաճ կերպով, ապա զարգացման առկա ներուժը լիարժեք չի բացահայտվում ու հանրագուտ չի իրացվում: Այս դեպքում անխուսափելի է կամայական ինքնագործունեության և փոխհարաբերությունների կարգավորման ոչ ֆորմալ կանոնների ու նորմերի տիրապետման մթնոլորտի առաջացումը: Այդպիսի մթնոլորտում ոչ միայն անհնարին է կայուն զարգացումը, այլև առաջանում են զարգացմանը խոչընդոտող մեխանիզմներ: Դրանց գործողության հետևանքներից են հետամնացության, թերզարգացման խորացումը, ընդհանուր քայքայումը, դուալիզմի դրսևորումը և այլն: Իսկ եթե պետությունը ստանձնում է նշված գործառույթը և հետևողականորեն իրականացնում, ապա ամուր հիմքեր են ստեղծվում պատասխանատու զարգացման համար:

Պատասխանատու զարգացման թելադրանքով է նաև, որ անցած տասնամյակների ընթացքում զարգացման հայեցակարգային ըմբռնումը խորացել և ընդլայնվել է: Դա արտացոլվում է զարգացման՝ որպես տնտեսական աճի գուտ տնտեսական մեկնաբանությունից նշանակալի տեղաշարժով դեպի դրա ավելի լայն իմաստավորումը, ներառյալ բազմաշերտ՝ սոցիալական, քաղաքական, ինստիտուցիոնալ, մշակութային, հոգեբանական, վարքագծային և մյուս չափումները²²: Ջարգացման տնտեսագիտության մեջ մշակվել ու հաստատվել են այնպիսի հիմնարար հայեցակարգեր, ինչպիսիք են՝ հնարավորությունների ընդլայնումը, բեռային անհավասարությունների չափավորումը, մարդկային ներուժի ձևավորումը, կատարելագործումը և իրացումը, ազատությունը, բարեկեցությունը: Չնայած տեսական այս արդյունքներին, գործնականում հետամնացությունը, թերզարգացումը և զարգացումը զոյակցում են: Այս իմաստով, զարգացումը պետք է գնահատվի նաև որպես հետամնացության հաղթահարում և թերզարգացման կրճատում:

Այսպիսով՝ տնտեսության կայուն զարգացումը բնութագրվում է բազմաթիվ որակական և քանակական բնութագրիչներով, որոնց միջև օպտիմալ համամասնությունների ձևավորումը համընդհանուր խնդիր է և բխում է ողջ հասարակության շահերից: Սակայն տնտեսության կայուն զարգացումը՝ որպես վիճակագրական ուսումնասիրության օբյեկտ, ենթադրում է համապատասխան հիմնական փոփոխականների, երևույթների ու կապերի քանակական կողմերի ուսումնասիրություն և դրա ուսումնասիրության հիման վրա որակական բնութագրիչների բացահայտում ու վերափմաստավորում: Առաջին հայացքից պարզ թվացող այս խնդիրը բավական բարդ է, քանի որ առանձին դեպքերում առնչվում է տնտեսության կայուն զարգացումը բնութագրող այնպիսի վճռորոշ գործոնների քանակական գնահատման անհրաժեշտության հետ, ինչպիսիք են մարդկային կապիտալի ու ինստիտուտների

²² Տե՛ս Ա. Վարդանյան, Տնտեսական աճի որակական բնութագրերը զարգացման համատեքստում: Եր., «Բանբեր ՀՊՏՀ», 2013 (3), էջ 7–24:

զարգացման մակարդակը, դրանց միջև փոխառնչությունները, տնտեսական ու սոցիալական բաղադրիչների փոխկապվածությունը և այլն: Այդուհանդերձ, հատկապես զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում առանձնակի կարևորություն է ստանում տնտեսության կայուն զարգացման մոտեցումների և կառուցակարգերի բացահայտումը, որի հիմքը համակարգված վիճակագրական ուսումնասիրություններն են:

Օգտագործված գրականություն

1. Ա. Վարդանյան, Տնտեսական աճի որակական բնութագրերը զարգացման համատեքստում: Եր., «Բանբեր ՀՊՏՀ», 2013 (3):
2. Coyle D., GDP: A Brief but Affectionate History. UK: Princeton University Press. Chapter 1, 2012.
3. Kuznets S., National Income, 1929, 1932, 1934, 73rd US Congress, 2d session, Senate document no. 124.
4. Dickinson E., GDP: A Brief History // Foreign Policy, 2011.
5. Costanza R., Hart M. Beyond GDP: The Need for New Measure of Progress. USA: Boston University Creative Services. 2009.
6. Myrdal G., Asian Drama: An Inquiry into the Poverty of Nations. N.Y., 1968.
7. Todaro M., Economic Development. Addison-Wesley Publishing Company, 1996, 6th ed.
8. Simmons S., Economic Development and Economic History //Development Studies and Colonial Policy /Ed., By B. Sygham, S. Simmons. L., 1987.
9. World Bank, World Development Report. New York: Oxford University Press, 1991.
10. Корнаи Я., Инновации и динамизм: взаимосвязь систем и технического прогресса. „Вопросы экономики”, 2012, N4.
11. Глазьев С., Теория долгосрочного технико-экономического развития. М., “Влад-Дар”, 1993.
12. Кузнецов Б., Введение в экономическую синергетику. Набережные Челны, Изд.-во Кам ПИ, 1999.
13. Нуреев Р., Теория развития: дискуссия о внешних факторах становления рыночной экономики “Вопросы экономики”, 2000, №7.
14. Ерохина Е., Прибыль в условиях монополистической конкуренции. Томск, 1994.
15. Шумпетер Й., Теория экономического развития: пер. с нем., М., 1982.
16. Селигмен Б., Основные течения современной экономической мысли. М., “Прогресс”.
17. Кронрод Я., Очерки социально-экономического развития XX века. М., 1992.
18. Тойнби А., Постигание истории. М., “Прогресс”, 1991.
19. Мизес Л., Бюрократия. Запланированный хаос. Антикапиталистическая ментальность. М., “Дело”, 1993.
20. Хомяков П., Национал - прогрессизм. М., “Паллада”, 1994.
21. Маршалл А., Принципы экономической науки: в 3 т.: пер. с англ., М., 1993.
22. Кидрина С., Институциональные матрицы и развитие России, М., “ТЕИС”, 2000.
23. Дорина Е., Проблемы институционализации в контексте глобальной интеграции и трансформации мировой экономики. “Вестник экономической интеграции”. 2009.

АРАКСЯ НАЗАРЕТЯН

Аспирант кафедры Статистики АГЭУ

Характеристики устойчивого развития экономики как объекта статистического изучения.– Современная мировая экономика является динамично меняющейся системой. История экономики свидетельствует о том, что нет конкретного и единого метода устойчивого развития экономики, который подразумевает такие качественные изменения, которые, в первую очередь, должны проявляться в контексте институциональных реформ. Устойчивое развитие экономики как объект статистического исследования предполагает количественное изучение основных переменных, явлений и связей, характеризующих это развитие, выявление и переосмысление качественных показателей на основе этих изучений. Изучению этих вопросов и посвящена данная статья.

Ключевые слова: *устойчивое экономическое развитие, экономический рост, макроэкономическое равновесие, статистическое исследование, научно-технический прогресс.*

JEL: C40, C43, C46, C49, O11, O29

ARAKSYA NAZARETYAN

Post-graduate at the Chair of Statistics at ASUE

Characteristics of Sustainable Economic Development as the Object of Statistical Study.– Modern world economy is a dynamic system. The history of Economics shows that there is no specific and uniform methodology for sustainable economic development. This question is still relevant, because a generally accepted concept of sustainable development is not found yet. Sustainable economic development means qualitative changes, which should occur in the context of institutional reform.

Sustainable development of the economy as an object of statistical study involves a quantitative study of the main variables of the phenomena and relationships that characterize this development, identification and redefining of quality indicators on the basis of these studies. This article is devoted to the study of these problems.

Key words: *sustainable economic development, economic growth, macroeconomic equilibrium, statistical research, scientific and technological progress.*

JEL: C40, C43, C46, C49, O11, O29